



ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԵԿԱՆ, ԵՒ ԲԱՐՈՅԵԿԱՆ.

ԹԻՒ ԺԱ. — ՇՐՋԱՆ Ե.

1872

ՏԱՐԻ Ե. — ՆՈՅԵՄԲԵՐ 30

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ԵՐԹՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ

ԵԿԵՂԵՑԻՈՅ*).

ԽՈՐՀՈՒՐԴՔ.

Մեր Փրկիչ Յիսուս Վրիստոս՝ աշխարհի վերայ դսնուած միջոցում՝ ոչ միայն մարդկային բնութեան հիւանդութիւնը բարձաւ և ցաւերը բժշկեց, — ինչպէս կգրէ բազմահմուտ Աստուածաբանն Յակոբ Պատրիարք Նալեան, — այլ և ի նշան մշտնջենաւոր բժշկարարու-

(*) Այս աշխատութեանս մէջ զխաւորապէս արժանաշիշատակ Յակոբ Պատրիարք Նալեանի ընդարձակ «Մեկնութիւն եօթն խորհրդոց Եկեղեցւոյ» կոչեալ ձեռագրքէն մեծ օժանդակութիւն գտած և նմին հետեւած եմ:

Թեանն՝ իւր աներեւոյթ շնորհները խառնեց երեւելի տարերաց մէջ, և նոցա բնական զօրութիւնքը շրջեց ի գերբնականս, և յանձնեց իւր բժշկականութեան վարժոցի աշակերտացն, այս ինքն՝ պաշտօնէից Ակեղեցւոյ, որպէս զի նոքօք ի Վրիստոս հաւատացելոց մէջ մշտնջենապէս հիւանդացեալներուն մօտ միշտ ներկայ բժիշկներ լինին՝ փոխանորդաբար բժշկելով Վրիստոսի անդամները:

Ակեղեցին Վրիստոսի ի սկզբանէ սահմանած է Խորհուրդք՝ անուանել ըզնոսա, և ըստ աւանդութեան Փրկիչի մերոյ՝ կողործադրէ, իբրեւ հոգւոց հիւանդութեանց դեղ և սպեղանիք են (խորհրդոց) նիւթերը, զօրութիւնքն են Բանից պետաները, երկնաւոր բժշկին աշակերտքն են ապաստարդ խորհրդոց, բժշկելի հիւանդքն են ոչ Բանական և ներգործական մեղքք խեղաշեւտք, և խորհրդոց վախճանական մօտակայ պատճառն է՝ մարդկանց

հոգեւոր աստուծոյն, իսկ հեռաւոր պատճառ՝ յաւիտեական կեանքն է:

Ապաքէն խորհուրդն է Աստուածային անտեսանելի շնորհաց տեսանելի կերպը, որով անտեսանելի շնորհքն Աստուծոյ՝ Ահեղեցւոյ խորհրդովք՝ Վրիստոնէից տեսանելի կլինին, ինչպէս մտաց իմացումն մեզ հասկանալի կլինի լիզուաւ:

Թէպէտ Աստուծոյ աներևոյթ զօրութիւնք կլիմացունին և կճանաչուն երևելի արարածներով ևս, սակայն խորհուրդն կոչուիլ թէ և Աստուծոյ ծածուկ գեղեցիկութեան յայտնիք կը հանդիսանան:

Ասն ևս՝ որք խորհուրդք և նշանք կոչուած են, ինչպէս Օձն պղնձի կնշանակէր զՎրիստոս և նորա հոգեւոր բժշկականութիւնը կցուցանէր, և Թափատութիւնն կնշանակէր Վրիստոսիւ մեր հոգեւոր թրփատութիւնը, բայց չէին նոքա նման և պարագայի շնորհաց, այլ միայն ցոյցաւորէին՝ որպէս Վաւազանն Ահարօնի, Իսրայելացւոյ Արամիր ծովն անցնելն, Մանանայն, Սիմօն ջուր բղխելը, ևն: Վանդել չին Օրինաց խորհուրդները ստուերական կամ նշան էին և ոչ պարագայի շնորհաց: Իսկ Աոր Օրինացս խորհուրդք ոչ միայն են նշան և կերպ անտեսանելի շնորհաց, այլ միանգամայն պարագայի Աստուծոյն շնորհաց: Ամ թէ խորհուրդք Վրիստ. Ահեղեցւոյ՝ Օգալի և Արտաքին նշանք են կացուցեալ յԱստուծոյ և գործարարութեան նշանակել շնորհացն Աստուծոյ: — Օգալի և Արտաքին կոչուին, զի խորհուրդք կը կատարուն զգալի իրերով կամ բաներով, ինչպէս Մկրտութիւնը՝ ջրով, Վրոշմը՝ իւզով (միւռօնով), Հաղորդութիւնը՝ հացով և գինեաւ,

ևն. և յԱստուծոյ է կացուցեալ՝ Աստուածամարդ Վրիստոս սահմանած լինելով Ահեղեցւոյ խորհուրդները:

Խորհուրդք ամենակարեւոր են Ահեղեցւոյ մէջ, ոչ միայն թէ մեր Փրկիչ Վրիստոսի աւանդած և պատուիրած լինելոյն համար, — այլ զի նախ Միջնորդի և ապա Պատուիրանի կատարման հարկաւորութեան տեսութեամբ անհրաժեշտ է՝ ինչպէս յաւիտեական երանութեան հասանելոյ համար հաւատք ճշմարիտ տեսակաւորեալ բարի գործերով: — Իսկ կարեւորութիւն Միջնորդի ևս կրկին է՝ ներքին և արտաքին. իւր բնութեանն ունեցած և ներգործածն է ներքին՝ ինչպէս հարն ջերմ է, ուստի և կը բնացուցանէ. իսկ արտաքին է յԱստուծոյ հրամայեալը կամ կացուցեալը՝ ինչպէս է ջուրն ի Մկրտութեան, որոյ բնութեան մէջ չկայ մեղքերը սրբել:

Ամ թէ այսպէս ասեմ:

Այն ինքն անեղը և անվախճան բարին Աստուած՝ ունի իւր Էմօն խորհուրդք, և բազմիցս միջնորդովք կճանուցանէր զինքն և պատուէրները առ ժողովուրդն՝ մարգարէից, առաքելոց և այլոց ձեռք, այլ և այլ նշանական և խորհրդական սքանչելիք և հրաշագործութեամբ կը ներգործէր ժողովուրդեան սրտից մէջ երկիւղ, Աստուածապաշտութիւն, պատկառանք, ևն: Ոչ ապաքէն մեր Փրկիչ Վրիստոս ինքնին կատարեց այսպիսի խորհուրդներ իւր անձին և այլոց վերայ և այլ միջոցներով, որպէս իւր թրփատելը, մկրտելը, բժշկութիւնքը, աշակերտաց ոտքերը լուանալը, ընթրիքը, մանաւանդ ի Խաչ ելանելը և արեւն հեղուլը, որով

միայն ազատեց մարդիկը սատանայի զերութենէն և արժանացոյց իւր որդեգրութեան և երկնից Արքայութեան ժառանգորդութեան:

Ապաքէն մարդիկ առհասարակ կրկարօտին և հետամուտ են մտաց զիւրիմանալի և ձեռօք շօշափելի առարկաներով կազմել իւրեանց համոզմունքը, ուստի Աստուծոյ՝ առաւել իմանալի գործելոյ և տպաւորելոյ համար իւր Աստուածութիւնը, երկիւղը, սէրը և այլ ջերմեանդ և բարեպաշտական զգացմունքները մարդկան սրտից մէջ, և որպէս զի միշտ մեծակշիռ և զիւրիմաց ճշմարտութեամբք և իր կամ առարկաներով յարաժամ գրգռեն և շարժեն մարդկան հոգիքը, յարատե սնուցանեն նոցա սրտից մէջ և ի հոգիս՝ յարգանաց, զարմացման, ջերմեանդութեան, Աստուածապաշտութեան և Վրիստոնէական հաւատոյ զգացմունքները, Ահեղ, խորհրդովք կամ խորհրդական միջոցներով Աստուածային շնորհները վայելելոյ կամ ընդունելոյ պէտքը անշուշտ ամենակարեւոր և անհրաժեշտ է: Որպիսեօք մարդիկ զօրաւորագոյն շարժառիթներ և թելադրիչներ կունենան բարեգործութեանց և առաքինութեանց հետեւելոյ, և միանդամայն անձկալոյ անմահերանութեան ժամանակոյ համար:

Ուրեմն Վրիստոնէական կրօնի մէջ՝ ինչպէս յայտնի կերեւի՝ իբրև ի վերուստ շնորհեալ ճշմարտութեան պարունակութիւնք մեծագոյն մասամբ խորհրդական են, այս ինքն զգայական աչաց անիմանալի, և միայն հաւատոյ աչաց տեսանելի և մտաց իմանալի վարդապետութիւնք, որովք կնորոգի բարոյագէտ սիրտ իւրաքան

չիւր մարդոյ, կկազդուրի և կզարդանայ գերբնական շնորհօք և կը փառաւորի սրբութեան և կատարելութեան ծայրը հասնելով, և յետ մահուան կվերափոխի յերանաւէտ հանգիստ և ի վայելս անմահ կենաց Արքայութեան երկնից:

Արդ Ահեղեցոյ խորհրդք՝ զլեւաւորագէտ Եօնն են *), որոց մէջ գրեթէ այլ ամենայն մնացեալքն կը բովանդակուին: Ահաւասիկ են:

Մկրտութիւնն,

Գլուշմն,

Հաղորդութիւնն,

Կարգն,

Ապաշխարութիւնն,

Պսակն, և

Օծումն կամ Այցելութիւն հիւանդաց, որոց համար՝ առաջիկայ Յունվարի ամսաթերթէն սկսեալ՝ կմնայ հետզհետէ զրիւ և բացատրել:

(Նորոշման):

Վահրամ Վարդապետ

Մանկունի:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԹԻՆՈՒՐ ԵՆ ԱՆԱՐԱՅԻ ԵՒ ՏԳՄՈՒՏ.

Յայտնի է, որ մեր նախնի պատմիչներն ինչ գաւառում իւրեանք բնակուած ու պատմութիւն են գրած, էն գաւառի աշխարհադրական դրութիւնները աւելի ճիշտ են ստորագրած. ընդ հա-

(*) Վան ումնք՝ որք աւել և պակաս կտքին ցուցանել առանց օրինաւոր փաստի և հակառակ աւանդութեանց և Վարդապետութեան Ընդհ. Բրիտ. Եկեղեցւոյ: